Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀՀ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը.**

   Հակոբ Արշակյան:

2. **Զբաղեցրած պաշտոնը.**

   ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարար:

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

   Արաբական Միացյալ Էմիրություններ (Դուբայ), 2019թ. հոկտեմբերի 13-ից 16-ը:

4. **Հրավիրող կողմը.**

   Դուբայի կառավարության հրավերով՝ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարար Հակոբ Արշակյանը Արաբական Միացյալ Էմիրություններում (ԱՄԷ) մասնակցել է «Արհեստական բանականությունը սպորտում» համաժողով/ցուցահանդեսին (DAIS), որն անցկացվել է Դուբայի թագաժառանգ Ն.Գ. Շեյխ Համդան բին Մուհամմեդ բին Ռաշիդ Ալ Մակտումի հովանավորության ներքո:

5. **Գործուղման նպատակը.**

   Մասնակցություն «Արհեստական բանականությունը սպորտում» համաժողովին ու ցուցահանդեսին (DAIS):

6. **Քննարկված թեմաները.**

   Համաժողովի ընթացքում Նախարար Հ. Արշակյանը մասնակցել է «Արհեստական բանականության ռազմավարության պլանավորում» թեմայով պանելային քննարկմանը, որտեղ ներկայացրել է արհեստական բանականության ոլորտում Հայաստանի ներուժը և իրականացվող ու նախատեսվող ծրագրերը:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

DAIS-ն անցկացվում է որպես ցանցային հարթակ՝ մարզական արդյունաբերության ոլորտում արհեստական բանականության լուծումներ ներդնելու նպատակով: Դուբայի թագաժառանգ և Դուբայի սպորտային խորհրդի նախագահ Ն.Գ. Շեյխ Համդան բին Մուհամմեդ բին Ռաշիդ Ալ Մակտումը հատուկ շնորհակալություն է հայտնել Նախարար Հակոբ Արշակյանին՝ «DAIS»-ին մասնակցելու և համաժողովի աշխատանքներում ունեցած ներդրման համար:

Միջոցառման շրջանակներում Նախարարը երկկողմ հանդիպումներ է ունեցել ԱՄԷ-ի արհեստական բանականության նախարար Օմար ալ Օլամայի, ինժեներական ու ռոբոտաշինական «Boston Dynamics» ամերիկյան ընկերության գլխավոր տնօրեն Մարկ Ռայբերտի հետ: Հանդիպումների ընթացքում կողմերը քննարկել են արհեստական բանականության տեխնոլոգիաների, ինչպես նաև բարձր տեխնոլոգիաների ոլորտներում համագործակցության հնարավոր ուղղությունները:

Հակոբ Արշակյանը ներկայացրել է մեր երկրի տեխնոլոգիական ոլորտի հնարավորությունները և այդ ուղղությամբ իրականացվող պետական քաղաքականությունը: Նախարարն ընդգծել է հայ մասնագետների ունեցած մեծ ներուժը, ոլորտի այսօրվա զարգացման միտումները և դրանց համապատասխանության մակարդակը դեռևս Խորհրդային միության տարիներին հայ մասնագետների ունեցած բարձր մասնագիտական որակավորմանը: Հ. Արշակյանն ընդգծել է, որ Հայաստանն ունի շատ տաղանդավոր երիտասարդություն, ովքեր մասնագիտանում են մաթեմատիկայի, ֆիզիկայի, արհեստական բանականության, միկրոէլեկտրոնիկայի, ծրագրավորման և տեխնոլոգիական մյուս բնագավառներում, և իրենց գիտելիքներով ու փորձով կարող են մրցունակ լինել միջազգային շուկայում:

Նախարարն անդրադարձել է նաև կրթական այն ծրագրերին, որոնք ուղղված են ոլորտի բարձրակարգ կադրեր պատրաստելուն, մասնավորապես՝ «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի գործունեությանը, որտեղ հայ պատանիները ծրագրավորման դասընթացներ են անցնում՝ ստեղծելով սեփական նախագծերն ու ծրագրերը: Հակոբ Արշակյանը խոսել է նաև դպրոցներում ռոբոտաշինական լաբորատորիաների առկայության և հետագայում դրանց ընդլայնման մասին:

Մանրամասն ներկայացվել է նաև «Հայկական վիրտուալ կամուրջ» ծրագիրը, որը ենթադրում է, որ Հայաստանում գոյություն ունեցող և ստեղծվող ցանկացած ընկերություն հնարավորություն է ունենալու հայկական սփյուռքի և «Հայկական վիրտուալ կամուրջ»-ի օգնությամբ ունենալ ուղիղ կապ համաշխարհային շուկաների և էկոհամակարգային բաղադրիչների հետ՝ սկսած տաղանդի

ներհոսքից մինչև դրա ստեղծած վերջնական արդյունքի արտահանումը՝ ամբողջական շղթայի ապահովումն իրականացնելու համար:

ԱՄԷ արհեստական բանականության նախարար Օմար ալ Օլաման իր հերթին ներկայացրել է իրենց նախարարության գործունեությունը և իրականացվող ծրագրերը: Հակոբ Արշակյանը շրջայց է կատարել ԱՄԷ կառավարության շենքում, որտեղ տեղակայված են ստարտափ ընկերություններ, աքսելերատորներ, նորարարական լաբորատորիաներ, ծանոթացել դրանց գործունեությանը:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Նախարար Հակոբ Արշակյանը ԱՄԷ արհեստական բանականության(ԱԲ) նախարար Օմար ալ Օլամային հրավիրել է Հայաստան՝ քննարկելու արհեստական բանականության տեխնոլոգիաների ոլորտում համագործակցության հնարավորությունները: Առաջարկն ընդունվել է Օմար ալ Օլամայի կողմից. ակնկալվող հանդիպման վերաբերյալ մանրամասները քննարկվելու են՝ ի լրումն:

ԱՄԷ ԱԲ նախարար Օմար ալ Օլաման առաջարկել է կազմել երկկողմ համագործակցության շրջանակները ներկայացնող հուշագիր և խնդրել է տեղեկացնել՝ ԱՄԷ վարչապետի անունից վարչապետ Նիկոլ Փաշինյանին պաշտոնական այցով ԱՄԷ մեկնելու հրավեր ուղարկելու նպատակահարմարության մասին, որի շրջանակներում էլ կստորագրվի հուշագիրը: Այս կապակցությամբ նախարար Արշակյանը խոստացել է համապատասխան ձևաչափով հավելյալ տեղեկություն տրամադրել ԱՄԷ կողմին:

9. Ստորագրությունը, ամսաթիվը.

Հակոբ Արշակյան 18.10.2019թ.

Recoverable Signature

X

VERIFIED OCSP 10/21/2019 12:24:44 GMT+4

Signed by: ARSHAKYAN HAKOB 2604850273